ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-6

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար համակարգիչների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 02.11.2018թ. N 313/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30.11.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դուրգարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Գալստյանը, Գ.Ստեփանյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Քաքի որ, «Լանար Սերվիս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունները և համակարգի միջոցով ներկայացրել է հրավերով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը (կցվում է)՝ գնահատող հանձնաժողովը շարունակեց հայտերի գնահատումը՝
-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Լանար Սերվիս» ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը /կցվում է/՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Մ.Դուրգարյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝
-Հաշվի առնելով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝
- առաջին տեղը զբաղեցրած «Լանար Սերվիս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
- ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
-Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Լանար Սերվիս» ՍՊԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Դուրգարյան

Անդամներ՝ Գ.Գալստյան

Գ.Ստեփանյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան